

ԽՄԲԱՅԻՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Հաղարեան ճեմարանի մասնագիտական դասարանների Պոր-
հուրդը 1910 նոյեմբերի 5-ին Հ. Աճառեանի Գաւառական Բառա-
րանը ճանաչեց արժանի Դ. Քանանեանի մրցանակին:

Նոյն Պորհուրդի որոշման համեմատ, որ տեղի ունեցաւ 1912
նոյեմբերի 7-ին, յիշեալ բառարանն այժմ լոյս է տեսնում էմի-
նեան Ազգագրական Ժողովածուի մէջ իբրեւ նորա Թ. հատորը:

Այն տեսութիւններն ու սկզբունքները, որոնք առաջնորդ են
հանդիսացել Գաւառական Բառարանիս կազմութեան ժամանակ,
հեղինակը պարզել է իւր յառաջաբանի մէջ, որից կարող է տե-
ղեկանալ և հայ ընթերցողը:

Իբրեւ իւր տեսակի մէջ առաջին օրինակ՝ Հ. Աճառեանի Գա-
ւառական Բառարանն այժմ մատչելի է դառնում գրական և գի-
տական ընդարձակ շրջանների ուսումնասիրութեանը, Հայ բառա-
րանների կարգի մէջ ներկայ գաւառական բառարանը մի կողմից
լրացնում է նոցա թերին և միւս կողմից կարծես նոցա շարայա-
րութիւնն է դառնում: Սակայն այդ բառարանի նշանակութիւնն
առաւել մեծ է հայ ազգագրութեան նկատմամբ. նորա մէջ ամփո-
փուած են թանգագին տիղեկութիւններ և ցուցումներ հայ ժողո-
վրդի բարձր, սովորոյթների, խաղերի, հաւատալիքների, ընտա-
նեկան և հասարակական կենցաղի և այլ այսպիսի հանգամանք-
ների մասին և որ զլիաւորն է, նա տալիս է հարուստ պաշար
հայկական բարբառագիտութեան, որը մեծ նշանակութիւն ունի
Հայոց լեզուի ամբողջ նկարագիրն ըմբռնելու համար: Չնայելով
այս առաւելութիւններին, Հ. Աճառեանի Գաւառական Բառարանը՝
իբրեւ բառերի և դարձուածների հաւաքածու՝ լիակատար չէ: Այդ
երևում է ներկայ տարուայ յունուար ամսին Մայր Աթոռի տպա-
րանում լոյս տեսած այն աշխատութիւնից, որ կազմել է Սահակ
վարդապետ Ամատունի «Հայոց բառ և բան» վերնագրով: Երկու
աշխատութիւնների մէջ պարունակուած նիւթերի համեմատու-
թիւնը բերում է այն եզրակացութեան, որ նոքա, իրարու ուղղե-
լով և իրարու լրացնելով, կարող են նոր յայտնութիւնների առիթ
լինել և միևնոյն ժամանակ նպաստել հայերէն լեզուի աւելի ընդար-
ձակ ծանօթութեան:

Էմինեան Ազգագրական Ժողովածուի սոյն Թ. հատորն 'ի լոյս
ընծայելով, խմբագրութիւնս մեծ յոյս է տածում, որ Գաւառական
Բառարանս կ'արժանանայ իւր պատշաճաւոր զնահատմանն և միա-

ժամանակ դիւրութիւններ կ'ընծայէ Հայոց ներքին կեանքի բաղդատական ուսումնասիրութեան և ճշգրիտ լուսարանութեան գործին:

Ընթերցողին թողնելով անմիջական ծանօթութեան միջոցով իւր եզրակացութիւններ հանելու սոյն հրատարակութեան մասին, խմբագրութիւնս, օգուտ քաղելով ներկայ առիթից, իւր պարտականութիւնն է համարում, վերջապէս, երախտագիտութեան հարկը տալ 1912 փետրուարի 8-ին վախճանած ուսուցչապետ Գ. Ա. Պալաթեանցի յիշատակին, որ իւր կեանքի վերջին տասնամեկում այն է, 1901-ից մինչև 1910 թուականն, էմինեան Ազգազգրական ժողովածուի խմբագրութեան և հրատարակութեան ղեկավարն եղաւ: Նորա խմբագրութեամբ լոյս տեսան նոյն ժողովածուի բոլոր ութն հատորները, որոնք այսօր գիտութեան թանգազին ժառանգութիւնն են: Լազարեան ճեմարանի մասնագիտական դասարաններում հայկաբանութեան ուսուցչապետի ամբիոնը գրաւած լինելով, հանգուցեալ Գրիգոր Արրահամեան Պալաթեանց, 1881 թուից սկսած, երբ լոյս տեսաւ նորա առաջին յօդուածը «Սասունցի Դաւիթ» մինչև 1910, երբ հրատարակուեցաւ նորա վերջին երկը «Ուրուագիծ Հին Հայաստանի Պատմութեան» ** երեսուն տարի շարունակ անխոնջ աշխատանք կրեց Արեւելագիտութեան ասպարիզում: Գիտութեան համար թանգազին նպաստներ են ինչպէս նորա հրատարակած հին յիշատակարանները, որոնց մէջ առանձնապէս նշանակելի են Լազարեան ճեմարանի 887 թուին գրուած գրչագիր աւետարանի լուսատիպ հրատարակութիւնն, և Մնացորդաց գիրքը, նմանապէս և նորա քննական յօդուածներն ու հետազօտութիւնները, որոնց մէջ առանձին հետաքրքրութիւն են շարժում «Հայկական Վէպը Մովսէս Պորենացու պատմութեան մէջ» (Մոսկով 1896) և «Հայ Արշակունիք Մովսէս Պորենացու պատմութեան մէջ» (Մոսկով 1903) աշխատութիւնները: Ցաւալի է, որ մահը խզեց նորա կեանքի թելը, որ դեռ լի էր կարողութեամբ, և գիտութիւնը զրկուեցաւ մի վաստակաւորից, որ քաջ ճանաչում էր իւր պարտականութիւնը:

Խմբագրութիւնս, լիապէս գնահատելով հանգուցեալ ուսուցչապետի, Գրիգոր Արրահամեան Պալաթեանցի, երախտիքը, էմինեան Ազգազգրական ժողովածուի սոյն Թ. հատորն, իբրև առաջին հրատարակութիւնը նորա մահից յետոյ, ձօնում է նորա անուանը: Թող յաւերժ անմոռանալի ֆնայ նորա յիշատակը:

Կ. Կ.

3 Սեպտ. 1913 Մոսկով
Լազարեան ձեռագրան.

* м. Ж.М.Н.П. Октябрь.

** м. Труды по Востоковѣдѣнію, XXX.